

Արդէն 1809-ին Անգլիան պաշտօնապէս ճանաչեց, որ Թիւրքիան իրաւունք ունէր իր մայրաքաղաքի ապահովութեան համար, հարկը պա-

մէջ, իսկ աղջկանց ուսումնարանի աշակերտուհիները՝ առաջնորդարանի կամ յոնաց հիւպատոսարանի մէջ: Կանանց և փոքր երեխաներու ոչինչ չեն ըրած. սպանուած են այն կիները միայն, որոնք ուզեր են թախանձով կամ կռուով պաշտպանել իրենց մարդիկը:

Կիսկները կտաքերով կը կրեն, և կը թաղեն 15—20-ը մէկտեղ: Թաղապետութիւնը կը վերցնէ դիակները, զանաւոր կտաքերով հայոց գերեզմանատունը կը տանի և կը թաղէ քահանայի մը հովուութեամբ:

Այդ նոյն երեքշաբթի օրը, դարձեալ ժամը 4 1/2-ին, թիւրք գիւղացիներն ալ յարձակեր են հայ գիւղերու վրա:

Մի քանի գիւղեր, յամառ դիմադրութեամբ մը, յաջողեր են պաշտպանել ինքզինքնին: Այլեր և հիմնայապակ ըրած են շատ տներ:

Արարմէնէի և գիւղերու հայերը սպանուած են անխափր, առանց բացառութեան:

Այսօր՝ աւարիականով եկող յոյն ճամբարդներէ կը լսենք, որ Տրապիզոն կառավարութիւնը սկսեր է կախաղաններ կանգնել:

Ինչու...

Պ.

ՆՅՈՒՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 20-ից, Ռուսիայի վրայով Վաշինգտոնէ տեղեկութիւններն են հաղորդում, թիւստ մեծ յուզումներ է ախրում ամբողջ երկրին մէջ: Մասնաշտապներ, առանձնապէս քիւրդեր, լսելով որ հայեր Եւրոպայից օգնութիւն և պաշտպանութիւն են դառնել, կ'ատաղած են: Շրջակայ գաւառներէ, այն է՝ Շատախ, Նորդու, Մոկս և այլն, քիւրդերէն նեղուած՝ հայ ժողովրդեան մի ստուար թիւն եկած գիւղացիներն Վանում:

Հոկտեմբերի 22-ին նշանակված է վրաց բանակային իշխան Ռաֆայէլ Էրիստովի գրականական գործունէութեան յիմնական յօդուները: Այդ նպատակով արդէն մի մասնաժողով է կազմված, որը արդէն սկսել է իր գործունէութիւնը: Վրաստանի ամեն ծայրերից մեծ արձագանք և համակրութիւն է դառն ալ յօդուները տօնելու միտքը, և վրաց լրագրողներից երկուսն է, որ շատ փառաւոր է լինելու այդ յօդուները:

Մի մասնաւոր նամակով հաղորդում են Վաշինգ, որ նորեւր աշխուղ սպանեցին տեղացի ցովհանդէս Տէր-Պօղոսեանցին: Վանի մէջ այդ մարդը յայտնի էր իբրեւ մատնիչ: Սպանողները չեն բռնված: Որքան ձիւղ է այդ լուրը՝ երաշխաւորել չենք կարող:

Հանձնած ժամանակ փակել նեղուցները օտար պատերազմական նաւերի առջև 1833-ին, ինչպէս յայտնի է, քիչ էր մնում, որ թիւրքիւն կորցնէ Կ. Պօլսը՝ իր սուլթանին ու խալիֆութիւնով միասին և այն էլ որի ձեռքով—իր հպատակ համարված Եգիպտոսի փախաբայի: Հռչակաւոր Մէհմէդ Ալի-խանն և մասնաւոր իր նշանաւոր որդին՝ Իբրահիմը վերին աստիճանի նեղն էին գրել Բ. Գուռը: Ամբողջ Փոքր-Ասիան գնացել էր թիւրքերի ձեռքից և եգիպտական բանակը արագօրէն մօտենում էր մայրաքաղաքին և անշուշտ կը գրաւէր, եթէ Ռուսաստանը, զօրքով և նաւատորմով օգնութեան չը հասնէր կործանման դուռը հասած Ելքանկութեան Դրան: *) Այս օգնութեան փախաբէն Ռուսաստանի և թիւրքիայի մէջ կապվեց Հիւսիսեւրոպէական Կոնգրէսի զախաղորդութիւնը, որի մէջ մի գաղտնի յօդուած էլ կար, որով թիւրքիւն պարտաւորվում էր, բացի սուլթանից, ոչ մի օտար պատերազմական նաւ ներս չը թողնելու որ և է պատրուակով: Անգլիան իմացաւ և սատարի բողբոջեց, նրան միացան և միւս արեւմտեան պետութիւնները: Երկուս բանակցութիւններից վերջը, 1841 յուլիսի 13-ին ստորագրվեց Էլզինի:

*) Մասնաւոր թիւրքերը պաշտօնական լեզուով Կ. Պօլսը կոչում են Դէրսասադէթ, որ նշանակում է երջանկութեան դուռ. կոչում են նախապէս Դէրս-Ալիյէ — Բարձր Դուռ: Այս վերջինը պէտք չէ չիթակել Բաբ-Ալի—Բարձրագոյն Դուռ հետ: Բարձրագոյն Դուռը այն հիմնարկութիւնն է, ուր զետեղված են թիւրքաց բոլոր միապետների պաշտօնարանները՝ ըսկած մեծ վեզիրից:

Մուշից, մի մասնաւոր նամակով հետեւեալ տեղեկութիւնն են հաղորդում. «Սեպտեմբերի 24-ին, քաղաքից 1/2 ժամ հեռու արեւելակողմը, Մօկուսը գիւղի վերեւ, ապառաժների մօտ, գիւղերուց պահուած ահաբեկիչներն զարկին յայտնի աղջկան: Միայն Ձորու թաղեցի Բարսեղ քահանային: Այդ առթիւ կառավարութիւնն ձեռքառեց հինգ մարդիկ վերայիւնալ գիւղից, բիթլիսի երիտասարդ մը, և քաղաքից՝ Անթառամենց Միսաքին:»

Գերմանական զինուորատեսները վաղը, հոկտեմբերի 11-ին, տօնում են նշանաւոր գիտնական գիւղատնտես Իլլիուս Կիւնի եօթնամասնականը: Կիւնը յայտնի է իբրեւ լուրջ գիտնական և մի և նոյն ժամանակ գործնական գիւղատնտեսութեան մէջ շատ հմուտ անձն: Նրա կարծիքները և խորհուրդները մեծ հեղինակութիւն են վայելում գերմանական գիւղատնտեսների շրջանում: Կիւնին ժողովուրդը անուանում է հայր Կիւն կամ պապ Կիւն: Կիւնը ունի աշակերտներ և կովկասում:

Ռուսաց օպերային խումբը սերբի օր, հոկտեմբերի 6-ին, ներկայացրեց «Հուգենօտներ» օպերան: Անգլիան բազմութիւն լցվել էր թատրոնը, իմանալով որ ներկայացմանը մասնակցում են խմբի բոլոր ուղեւոր: Գլխավորաբար, խումբը չարագրացրեց հասարակութեան տաճած յոյսերը և միայն երկու գլխաւոր ուղեւոր՝ երգչուհի Մարչազ, որ կատարում էր Մարգարիտ թագուհու դերը, և երգչուհի Լինկվիտ, որ կատարում էր Վալէնտինայի դերը, աջողութիւն ունեցան, մնացածները միջին անգամ իրանց դերերը չէին սերտել:

Ինչպէս յայտնի է, հոկտեմբերի 16-ին է նշանակված քաղաքային վարչութեան երկու անդամների ընտրութիւնը: Ասում են, որ վարչութեան անդամի պաշտօնի համար քուէարկվելու են, բացի վիճակով դուրս եկածներից, և երկու նոր անձինք՝ ի. Վէրսիլով և Պ. Եսկիմով:

Մայրաքաղաքի լրագրողների խօսքով, լուր է պատում, որ կը հրատարակվեն նոր թղթադրամներ:

Հարկային տեսուչ Կորգանով, հասանգստեւոր կարգադրութեամբ, պէտք է ներկայ լինի թիւրքիւն արհեստագործների աւարի ընտրութիւններին՝ կարգապահութեան և ընտրութիւնների կանոնաւորութեան վրա հակելու համար: Այդ կարգադրութիւնը հետեւեալ է այն անկանոնութիւնների, որ տեղի էին ունենում նախկին ընտրութիւնների ժամանակ:

պայմանադրութիւնը, որ մնում է դեռ ևս Convention des detroits (նեղուցների պայմանադրութիւն) անունով, որի համաձայն Ռուսիա, Անգլիա, Աւստրիա, Ֆրանսիա, Պրուսիա և թիւրքիա պայմանաւորվեցան, որ նրանք ոչ մի պատերազմական նաւը՝ ոչ խաղաղութեան և ոչ պատերազմի միջոցին, իրաւունք պիտի չունենայ անցնելու Բոսֆորի և Կարդանէլի նեղուցներից: Իսկ սուլթանին արտօնութիւն էր տրվում, որ նա կարողանայ ֆէրման տալ միայն թիւրքիա պատերազմական նաւերին, պատերազմական զրոյակի տակ: Այնուհետեւ 1856-ին, Պարիզի դաշնագրութեան հետ միաժամանակ, վերայիւնալ 6 տէրութիւնները և Սարդինիան մի նոր «պայմանադրութիւն» էլի հարկ տեսան կապել, որով հետեւ 1853-ի Կրիմի պատերազմի ժամանակ Անգլիա, Ֆրանսիա և Սարդինիա իրանց նաւատորմներն անցկացրած, որով և 1841-ի պայմանադրութիւնը խախտած էին: 1856-ի նոր դաշինքի համաձայն, տէրութիւնները վերադարձնում և պատերազմական նաւ չը կրնան ներս, միայն Պօլսի զենաւորատների տրամադրութեան տակ գրվում և Կանուրի աղառ նաւաւորութեան վրա հակելու նշանակված փոքր—պատերազմական չղեկանները կարող էին ազատօրէն անցնել, այսինքն սուլթանը պարտաւոր էր զբաղւած ֆէրման տալ: 18, 7-ի պատերազմից վերջ, Սան Սթեֆանոյի դաշնագրութեան 24-րդ յօդուածով, թիւրքական կառավարութիւնը պարտաւորվում էր ազատ թողնել ամեն ազգի այն առեւտրական նաւերը, թէ ինչ ազգուհի է և թէ

ՇՈՒՇՈՒՅ մեղ գրում են. «Շուշեցի Բալաթեղարեանց, իր կնոջ մահվան առթիւ, հետեւեալ նուիրատուութիւններն արաւ. Ղազանչեցոց եկեղեցու բազում պէտք է չինէ մի շէնք, օրհորդաց դպրոց բանալու համար, ուսուցիչների ուսնելու նախապէս պարտաւորվում է տալ որքան ժամանակ դպրոցը գոյութիւն կունենայ. Ղարաբաղի թեմական դպրոցին նուիրում է 700 ռուբլի, հայոց օրհորդաց դպրոցին՝ 500 ռ., Ղազանչեցոց եկեղեցուն՝ 400 ռ., և ուսաց օրհորդաց դպրոցին՝ 200 ռուբլի:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

Կ. Պօլսի, սեպտեմբերի 23-ին

Անգլիայի զենաւորատան թարգման պ. Շերլի, այն, որ Սասունի քննութեան գայած էր, երեկ պատրիարքարան եկաւ ու երկու ժամու չափ տեսնուեցաւ պատրիարքին հետ: «Պօլսոյ կոտորածը Սասունի մէջ մանրանկարն է» ըսաւ:

Պատրիարքը չըբարեբախտ մը զրկելով վեց պետութեանց զենաւորներուն՝ բացառեց ամբողջ պատմութիւնը, ցոյց տուաւ, թէ ինչպէս ժողովուրդը պարզապէս խաղաղասիրական դիմում մը ընել կողմէ և թէ՛ ինչպէս ոստիկանութիւնը սուլականներու սօֆիստիկ զգեստ հագնելով յարձակել տուաւ անոնց հայերուն վրայ: Պատրիարքը անհերքելի փաստերով ցոյց տուաւ, թէ կառավարութիւնն է այս ոճրագործութիւնը ընողը:

Վեց զենաւորները հաւաքական ծանուցագիր մը տալով պահանջեցին, որ կոտորածը անմիջապէս դադրի, ասոր վրայ քիչ մը հանդարտութիւն տրեց: Ժողովուրդը սակայն վտանգութիւն չունի, և եկեղեցիները ապահոված է: Մայր-եկեղեցին, Բերայի, Ղալաթիի, Խաֆիզի, Խաթաբ-փաշայի եկեղեցիները լեցուած են ժողովուրդով, շատ խղճալի և միանգամայն խրախուսիչ տեսարաններ կը պատմեն. սղորմելի հիւանդներուն թու են կարիճները, զէնքը ձեռքերին կը պաշտպանեն տկարները: Մայր-եկեղեցին այսօր զանգակաւուն մինչև կէսը սկս շարաւղ ծածկուեցաւ ի նշան սուգի: Անգլիայի զենաւորատան թարգմանը գնաց մայր-եկեղեցին, աչքով տեսաւ ամէն բան: Թղթակիցները կը պտտին եկեղեցիները, ամէն բան կը տեսնեն, կը ընեն: Կառավարութիւնը 300,000 ֆրանկ զրկեց Եւրոպայի թիւրքիւն, հետզհետէ ալ պիտի զրկէ: Տէյլի Նիսի թղթակիցը ամէն մանրամասնութիւններ կը ընէ կը հաղորդէ:»

Յ. Գ. Արքեպ. գրեցի թէ պատրիարքարանին բարապան Աւետիսն ալ սպանուեցաւ:

պատեւ ինչպէս ժամանակ, որոնք ուստական նաւաւորատներն էին գնում և այնտեղից դալիս—Բայց այս դաշնագրութիւնը ինչպէս յայտնի է, լուծվեց և փոխանակվեց Բերլինի դաշնագրութեամբ (1878, յուլիսի 13) որի մէջ հատաւորական դարձեալ նախկին, այսինքն 1856-ի պայմանները:

Ուշագրութեան արժանի է, որ Բերլինի կոնգրէսում Անգլիան պնդում էր թէ՛ նեղուցները պատերազմական նաւերի առաջ փակելու վերաբերեալ հարցերում միակ դատաւորը սուլթանը պէտք է լինի իսկ Ռուսաստանը դրա հակառակ այն կարծիքն էր յայտնում, թէ դաշնագրութեան ժամանակից պետութիւնների նաւերը՝ նոյն իսկ սուլթանի հրամանով էլ իրաւունք չունեն Կարդանէլից և Բոսֆորից անցնելու: Կոնգրէսում այս կարեւոր հարցը մնաց առանց պարզաբանվելու:

Ամենի մտքումն է անշուշտ, թէ ինչպէս 1878-ին, երբ ուսաց յաղթական բանակը Պօլսի դռների առջև էր, Անգլիան պահանջեց սուլթանին, որ թող սուլթան իրան իր նաւատորմը ներս բերելու: Սուլթանը ստատանման մէջ էր, ինչպէս միշտ, որովհետեւ ուսաց կառավարութիւնը յայտնել էր, որ եթէ անգլիական նաւատորմը ներս գայ, ուսաց բանակը պիտի յարձակվի Պօլսի վրա: Սուլթանը այս սպառնալիքի դիմաց միթեք ֆէրման տալը, այն ժամանակ անգլիական նաւատորմի ծովակալը հետեւեալ կարճ, բայց կտուկ հեռագիրը ստացաւ իր կառավարութիւնից: «Այսպապ մտքը Կարդանէլ և կանգնեցէ Կ. Պօլսի առաջ, իսկ եթէ Կար-

Կենսականատուները բաց են ընդունելու համար հան պաշտատուող հայերը. զենաւորները այժմ ամարանոց են, բայց հրահանգ տուած են իրենց պաշտօնեաներուն՝ ընդունել ապաստանող ժողովուրդը:

Կիները երկու օր առաջ Թարապիւս կերթային դիմում ընելու զենաւորներուն, համարն ետ դարձուցան ոստիկաններէն:

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

Կ. Պօլսի, սեպտեմբերի 28-ին

Սեպտեմբերի 28-ին, հինգշաբթի օրը, կէսօրէն մէկ ժամ անցած, մեծ պետութեանց առաջին թարգմանները, հանդիսաւոր չքով մտան Բերայի երբորդութեան եկեղեցին: Պատուաւորաւ բազմութիւնը, 1500 հոգի, ծախելով ու կեցեցներով կընդունէ զենաւորներուն ներկայացուցիչները:

Անգլիական թարգմանը, բազմութեան առջև կանգ առած, կը յայտարարէ թէ իրենք կուզան իրենց զենաւորներու կողմէ, հայոց Պատրիարքի խնդրանքի համեմատ, հաղորդելու որ բոլոր պատուարեալները ապահովութեան ներքեւ պիտի առնուին անուններուն ցանկով: Ուստի այդ վայրկեանէն սկսեալ՝ կրնան ազատօրէն դուրս ելլել, հաւատարմ ըլլալով որ ոչ ոք չը պիտի զայլի իրենց, ոչ ձեռքաւորութիւն պիտի ըլլայ, ոչ չարաբանքի պիտի ենթարկուին ոստիկանութեան կողմէ: Հակառակ պարագային՝ իրաւունք ունին այնուհետեւ ուղարկի զենաւորներուն օգնութեան դիմել, ինչ որ ըսաւ չը պիտի դացի իրենց: Հօտի յետոյ՝ կըսէ նաև որ թիւրքաց արտաքին գործոց նախարարն ալ պատուոյ խօսք տուած է իրենց կեանքի ապահովութեանը մասին:

Այս պաշտօնական յայտարարութիւնը նախ հեղ տպաւորութիւն կը գործէ, այնպէս որ կը պատրաստուին, առաջարկուած պայմանի համեմատ, թողուլ իրենց զէնքերն ու դուրս ելլել: Բայց անմիջապէս զգալով թէ իրենց խոստացուած կեանքի ապահովութեանն անոնք՝ 3000 հոգիի նոր գտները կան, թէ կարեւոր հարցը կայ, չուտով գրաւոր պայմաններ կառաւարկեն:

- 1) Հայոց հարցի անմիջական լուծում:
- 2) Բանտարկեալներու անպայման արձակում:
- 3) Կեանքի ապահովութիւն:

Առաջարկութիւնները, որչափ ալ իրաւացի ըստ ինքեան, քիչ մը զփականութիւն կը պարզեն թարգմաններու դէմքին վրա, որոնք, ինչպէս կըսեն իրենք, եկած էին ոչ թէ բանակցելու, այլ իրենց ապահովութիւն բերելու քրիստոնեայ տէրութեանց կողմէ: Ասոր վրա չիթիք կը սկսի, և թարգմանները, հակառակ իրենց բոլոր ջանքերուն, բան մը չը յաջողցուցած դուրս

գնալու արդեն, բռնի ներս մտնէ: Այս բռնի բռնն այն պարզ իմաստ ունէր, որ եթէ թիւրքերը դիմադրէին անգլիացիներին, Կարդանէլի ամբարկանները պիտի ենթարկվէին անգլիական զրահաւորների ու թաղանթներին: Սուլթանը և իր խորհրդականները լաւ զգացին այդ բանի նշանակութիւնը և երբ անգլիական զրահային երեցաւ ջանաւորաւորէի կամ թիւրքաց պաշտօնական լեզուով քաղելով Վալէի Սուլթանի յանձնը, ոչ մի թիւրքական թմրանով իր բերանը չը բացաւ. սուլթանը առաջարկել էր պահանջված ֆէրմանը չնորհելու:

Եւ շատ լաւ յիշում եմ, որ Կ. Պօլսում, այդ միջոցներին, նոյնպէս ամեն օր խօսք էր լինում, տարածվում թէ անգլիական զրահաւորները պիտի մտնեն, մտնում են և մտել են Կարդանէլ, բայց միշտ սուտ էին դուրս գալիս այդ լուրերը: Այս պարագան այնքան զանազան և ընդհանուր խօսակցութիւնների նիւթ էր դարձել, որ վերջի վերջոյ եղել էր ծաղրածութեան առարկայ և մի օր էլ թիւրքերը Պօլսի պատերի վրա հետեւալ յայտարարութիւնն էին կայցրել. «Բէգլիքայի և Կարդանէլի մէջ մի մեծ նաւատորմի զէնքերն ու կորեկ, ով ստանայ: Եւ գտնվեց վերջապէս այդ մեծ նաւատորմը, գտնվեց Պօլսի առջև, խորխուրով խորխուրով իշխանաց կղզիների դիմաց և մեղք, Սլոմապուլի բարձունքից կամ Բոսֆորի վրայից մտիկ էինք տալիս այդ անհղ ծովային ուղի վրա:

Այն ժամանակ գտնվեց, բայց հիմա ուր է արդեօր:

Ա. Կանաւոս

Типографія Канцел. Главннач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 64а.